կաթուղիկոսը և Ք. Ամենմի շատ թէ քիչ այս թեմի ընդհանուր վիճակին ծանօթ անձը այն կարծիքն ունի թէ եթէ դրութիւնը այսպէս շարունակուի, այս թեմի մէջ մինչև 10 -15 տարի այլևս հայութիւնը պիտի անյայտանայ, արդէն հիմա էլ թեմական հայերը մեծ մասամբ անունով հայ են, իրականի մէջ քիւրդ...

ԾԵՐՈՒԿ

(Վերջը յաջորդ համարում)

Նրանք իմ կեանքը երազ դարձուցին—
Կոսական մաքուր աչերը անուշ.
Ցամաքած սիրտս նորից լացուցին,
Հոգիս վառեցին երգերով քնքուշ.
Շուրջս փռեցին աստղունք ու ծաղկունք,—
Կուսական մաքուր աչերը անուշ..

* *

Վճիտ կը ցոլան աստղերն այս գիշեր,
Աղբիւրը զուարթ, պայծառ կը գնդայ.
Այս անուշ գիշեր, այս զուլալ գիշեր
Իմ սրտից նորէն արտըսունք կու գայ։

Քոյր իմ Նազելի, նայիր քու դիմաց
Վիրաւոր, աւեր սիրտս եմ բացել.
Ա՜խ, նուիրական ինձ քու դիրքը բաց.
Եւ դուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել...

Քնքուշ ձեռներով աչերս սրբիր,
Մի թող ինձ լալու,— ես շատ եմ լացել.
Մռայլ ճակատիս մշուշը ցրիր.—
Եւ դուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել...

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ